# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<< 13 >> նոյեմբերի 2018թ. N 152

ք. Արմավիր

**<<ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 1-ի N 355-Ա և 2018 թվականի նոյեմբերի 7-ի N 370-Ա որոշումները, <<Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**կարգադրում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լարիսա Մկրտչյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

13.11.2018

X

VERIFIED OCSP 13.11.2018 17:51:50 GMT+4

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

**ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 13-ի
N 152 կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն. Սարգսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

**Անդամներ՝**

Ա. Առաքելյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ:

Ս. Սաֆարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

**Հանձնող՝**

Գ. Գազազյան - <<Ծիածանի միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն,

**Ընդունող՝**

Ն. Կարապետյան - << Ծիածանի միջնակարգ միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի աշտոնակատար:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.11.2018 16:46:57 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217